

Ս Ղ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու համար
Արմեն Այվազյանի՝ «Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական
շարժման քառուղիներում» ատենախոսության հրապարակային
պաշտպանության առիթով ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող 004
մասնագիտական խորհրդում
2003թ. դեկտեմբերի 9-ին կայացած նիստի

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

Ա. Այվազյանի պատասխան խոսքը

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կարծիքին

«Շնորհակալություն Միջին դարերի պատմության բաժնի այս կարծիքն
ընթերցելու համար:

Անմիջապես անցնեն պատասխանին:

1. Բաժինը կարծիք է հայտնում է, թե մեր «ատենախոսության
ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 18-րդ դարն ամբողջապես,
սակայն հեղինակն ըստ էության չի անդրադարձել նույնիսկ 18-րդ դարի
առաջին կեսի իրողություններին, այլ սահմանափակվել է այդ դարի միայն 30-
ական թվականներով»: Բաժինը կարծում է նաև, որ «ճիշտ կլիներ անվանել
[ատենախոսությունը] «Դրվագներ», ինչպես որ իրականում է»:

«Ժամանակակից հայոց լեզվի բառարան»-ը այսպես է նշում
«քառուղիներ» բառի փոխաբերական իմաստը. «Տարբեր ուղղություններով
ընթացողների հատման՝ բախման կետ»¹: Ատենախոսությունը վերնագրելով
«Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում»,
մենք պարզ ուրվագծել ենք մեր նպատակը՝ հետազոտել հայոց եկեղեցու
պատմության անհայտ դրվագները՝ հայ ազատագրական շարժման հետ
հատման՝ բախման տարբեր կետերում, որոնք իրարից ժամանակագրորեն և

¹ Հատ. IV, Երևան, 1980, էջ 716:

այլապես անջատ են: Յետևաբար, այս դեպքում «քառուղիներ» տերմինի գործածումը շատ որոշակիորեն համարժեք է «դրվագներ» տերմինի իմաստին, որը և Միջին դարերի բաժինը կարծում է առավել նպատակահարմար էր ատենախոսության վերնագրի համար: Ընդ որում՝ մեր նպատակը երբեք չի եղել XVIII դարի ամբողջական ընդգրկումը, այլապես մենք կվերնագրեինք ատենախոսությունը «Հայոց եղեղեցին և հայ ազատագրական շարժումը XVIII դարում»: Սա հստակ նշել ենք էջ 8-ում (մեջբերում են). «Սույն մեմագրությունը, զուգահեռ տարածամանակյա հարցերի արծարծման հետ մեկտեղ, իր քննության կենտրոնում է պահում 1720-1730-ական թթ. առաջացած... մի շարք խնդիրներ»: Ուստի ատենախոսության վերնագիրն ու բովանդակությունը միմյանց հետ որևէ հակասության մեջ չեն գտնվում:

Ինչ վերաբերում է նրան, որ «հեղինակն ըստ էության չի անդրադարձել նույնիսկ 18-րդ դարի առաջին կեսի իրողություններին, այլ սահմանափակվել է այդ դարի միայն 30-ական թվականներով», ապա այս հայտարարությունը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Իրականում՝ ատենախոսությունը քննում է XVII-XVIII դարերի բազմաթիվ կնճռոտ հարցեր ու զարմանալի է, որ բաժինը դա չի ուզում նկատել:

2. Բաժինը պնդում է, որ մեր ատենախոսության մեջ «5-6 էջանոց գլուխներ են հանդիպում» և այդպիսի բաժանումն արդարացված չէ:

Նախ՝ ատենախոսության 11 հիմնական գլուխներում 5-6 էջանոց **գլուխներ** (հոգնակիով ասված) չկան, էջերը տատանվում են 9-ից մինչև 25 էջ: Միակ բացառությունը «Վերջաբան և եզրակացություններն» են, որոնք իրենց բնույթով իսկ ծավալուն չպետք է լինեն և կազմում են 4 էջ: Այսպիսով՝ բաժնի կատարած հաշվարկն սխալ է:

Այնուհետև ամենակարևորը՝ այդ որտե՞ղ է սահմանված, թե բոլոր ատենախոսությունները պետք է մի ինչ-որ միանման՝ համահավասարեցված կառուցվածք ունենան: Այդ որտե՞ղ է գրված, որ գլուխները պետք է անպայման շատ մեծ լինեն (լավ կլիներ նաև ճշտեին, թե յուրաքանչյուր գլուխ քանի էջ պետք է ունենա՝ 30°, 50° թե 100°): Մեր ատենախոսության գլուխներն այնքան են, որքան պահանջել է հետազոտությունը և այն մատչելի մատուցելու մեր ձգտումը: Կան բազմաթիվ մեծարժեք աշխատություններ, որոնց գլուխները

շատ ավելի փոքր են: Օրինակ, եթե բացենք Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ը՝ այնտեղ կհանդիպենք *հարյուրավոր* մեկ էջանոց և նույնիսկ կես էջանոց գլուխների: Ու միթե՞ դա կարելի է թերություն համարել:

3. Մեզ մեղադրում են, որ «ատենախոսությունը ծանրաբեռնված է սկզբնաղբյուրներից կատարված մեծաթիվ մեջբերումներով ու ծանոթագրություններով»: Եթե բացենք բաժնի կողմից քիչ առաջ բարձր գնահատականի արժանացած Աշ. Հովհաննիսյանի «Դրվագները», անմիջապես կհամոզվենք, որ սկզբնաղբյուրներից կատարված մեջբերումները նույնպես մեծաթիվ են, և մեր արածի չափին համարժեք, եթե ոչ ավել: Տարբերությունն այն է, որ մենք տարանջատել ենք մեջբերումները բուն տեքստից՝ ընթերցումն առավել դյուրըմբռնելի դարձնելու համար [բանավոր ավելացվել է՝ «և միաժամանակ փոքրացրել ենք տառատեսակի չափսը մեկ միավորով»]:

Նշված է, թե «ատենախոսության տեքստի 1/3 փաստորեն կազմում են մեջբերումները և ծանոթագրությունները»: Սակայն այդ երբևիցե՞ք է, որ տեղին օգտագործված մեջբերումները տեքստի մաս չեն համարվում: Մեջբերումներ կատարելով, դրանք բացատրելով ու թարգմանելով՝ մեր նպատակն է եղել առավելագույնս սեղմել շարադրանքը, այլ ոչ թե երկար-բարակ վերաշարադրել սկզբնաղբյուրը՝ ավելորդ ծավալ ստեղծելու համար, ինչպես հաճախ արվում է: Մեջբերումը թույլ է տալիս ուժեղացնել ապացույցն ու փաստարկը, «կենդանացնել» պատմությունն այն աստիճան, որպեսզի իրենք ժամանակակիցները խոսեն, վիճաբանեն, ներկայացնեն իրենց տեսակետներն ու դիրքորոշումները ու նաև հերքեն իրենց դեմ հնչեցված մեղադրանքները: Սա, ի դեպ, շատ ավելի բարդ խնդիր է, քան աղբյուրի վերաշարադրումը: Բաժինը ոչ մի կոնկրետ օրինակ չի բերում, թե ո՞ր դեպքում է մեր մեջբերումն ավելորդ և ո՞ր ծանոթագրությունն է ծանրաբեռնված: Ուստի ներկայացված քննադատությունն անընդունելի է: Այն էլ ասենք, որ մեր մեջբերումները տառատեսակի չափսով ավելի փոքր են, քան բուն տեքստինը:

Այսօրվա մեր ելույթներում ևս կհնչեն ըստ արժանվույն ծանոթագրված մեջբերումներ, որոնք կարող են լինել լավագույն փաստարկները:

4. Ատենախոսության ծավալի մասին: Նշվում է, թե բուն ատենախոսությունը կազմում է 161 էջ: Հավելվածներում ընդգրկված նյութերը, բացառությամբ Հավելված Ա-ի, համարվում են զուտ վավերագրեր:

Հավելված Ա-ը չենք ընդգրկել ատենախոսության հիմնական հատվածի մեջ, որովհետև այն իր ուրույն կառուցվածքն ունեցող մի առանձին 3-մամուլանոց ուսումնասիրություն է, որը բաղկացած է 19 (!) միջին ու մանր չափսի հետազոտություններից: Գիշտ այդ տեսքով էլ այն հրատարակվել է «Հանդես Անսօրեայ»-ում²: Մեր ամբողջ ատենախոսության ընթացքում հենվել ենք հավելված Ա-ում կատարված *ուսումնասիրության* վրա: Հավելված Ա-ի ծավալը հասնում է 228 էջին: Բայց ի՞նչ անենք այդ 56-էջանոց ուսումնասիրությունը՝ դե՞ն նետենք: Չե՞ որ առանց Հավելված Ա-ի արդյունքների՝ մենք չէինք կարող նույնիսկ սկսել ատենախոսության 10 գլուխներում կատարված հետազոտությունը:

Ավելին՝ Հավելված Բ-ի 1-ին փաստաթուղթը նույնպես հետազոտություն է, այն էլ՝ խտացված հետազոտություն: Այստեղ մենք ժողովել ենք էջմիածնի ծայրագույն նվիրակների մասին տեղեկությունները 1741 թվականից մինչև 1797 թ.: Միթե՞ հնարավոր էր այդ տվյալները ժողովել առանց սկզբնաղբյուրների մանրակրկիտ հետազոտության: Բ-րդ Հավելվածի վրա հենվելով ևս կատարվում են կարևոր եզրակացություններ: Հետևաբար՝ այն ևս անժխտելիորեն «բուն ատենախոսության» մաս է:

Հրատարակելով վավերագրերը մենք ուղեկցել ենք դրանք մանրամասն առաջաբաններով և բացատրություններով: 4,5 էջ են Մատենադարանի հմր. 9120 ձեռագրից քաղված և հրատարակված «Նվիրակության վիճակներ» փաստաթղթի առաջաբանն ու ծանոթագրությունները: Սրանց հետ միասին ծավալը կազմում է արդեն 233 էջ:

Այսպիսով ատենախոսության ծավալը ոչ միայն լիովին բավականացնում է 200 էջի պահանջներին, այլ դրանից շատ ավելին է:

² Վիեննա, հունվար-դեկտեմբեր 2000, No. 1-12, էջ 349-428:

5. Բաժնի կարծիքի համաձայն, «ատենախոսության գծով հրատարակված աշխատությունների զգալի մասը, առնվազն 6-7-ը չեն առնչվում թեմայի հետ: Դրանք վերաբերում են մայրենի լեզվի, ազգայնականության, 4-5-րդ դդ. հայ զինվորականության պատվո վարքականոնին, Ղարաբաղի ժողովրդագրությանը և գիտության այլ հարցերի»: Կարծիքը նաև զարմանք է հայտնում, «որ Մատենադարանում այս հարցերի վրա ուշադրություն չեն դարձրել»:

Մեզ համար մնում է գաղտնիք, թե «գիտության այլ հարցեր»-ին մվիրված այդ ի՞նչ ուսումնասիրություններ ունենք: Բայց հանգիստ թողնենք այդ առեղծվածային հարցերը և հաջորդաբար խոսենք նշված այն ուսումնասիրությունների մասին, որոնք, ըստ բաժնի կարծիքի՝ «չեն առնչվում թեմայի հետ»:

«Զինվորականություն»

Նախ՝ 4-5-րդ դարերի հայ զինվորականության պատվո վարքականոնի՝ այս ուսումնասիրության հետ ունեցած կապի մասին: Հայ զինվորականության պատվո վարքականոնը հայկական պետական գաղափարախոսության կարևոր բաղադրամասերից էր, իսկ ինչպես նշել ենք ատենախոսության սկզբում (էջ 7)՝ «Հայաստանյայց առաքելական եկեղեցին... իր յուրահատուկ աստվածաբանության, ծիսակատարության, հոգևոր ծառայությունների և խորհուրդների մեջ պահպանել է պետական հիմունքների վրա կազմակերպված հայ կյանքի և մտքի՝ դեռևս չհետազոտված ու չմեկնաբանված բազմապիսի արժեքավոր մասունքներ, որոնց բացահայտումն ու համակողմանի ուսումնասիրությունը հաճախ են օժանդակում մերօրյա, խիստ այժմեական հարցերի լուծմանը»:

Արդ, ատենախոսության 9-րդ գլխում կատարված հայ եկեղեցական գաղափարախոսության վերլուծությունը բացահայտում է զարմանալի նմանություններ 4-5-րդ դարերի հայկական պետական գաղափարախոսության հետ: Այսպես՝ XVIII դարում Ջահկեցին հայերի ազգակազմիչ բնորոշիչներից կրոնականը նշում է հինգերորդ աստիճանի վրա, առաջինների վրա դնելով հայրենիքը և ազգը, ընդ որում՝ նախաքրիստոնեական իր ծննդաբանությամբ

հանդերձ: 4-5-րդ դդ. հայ զինվորականության պատվո վարքականոնը, պաշտպանության ենթակա ազգային արժեքների թվում՝ Հայ եկեղեցին ու հավատը նշանակում էր դարձյալ ճիշտ նույն հինգերորդ տեղում և ազգն ու հայրենիքը ավելի առաջնային դիտում: [Բանավոր ասում է՝ «Այսինքն՝ այս նմանությունը շատ ցայտուն է և, եթե մենք չուսումնասիրեինք այ վարքականոնը, հնարավոր էլ չէր լինի կատարել այն համեմատությունը, որ կատարված է»:]

Առհասարակ՝ միտքը, ինքնավար զարգացման իր հատկությամբ, չի ճանաչում տասնամյակ, երեսնամյակ, մեկ դար հասկացությունները: Այդ իսկ պատճառով էլ գաղափարաբանությունների և հասարակական մտայնության հետազոտությունը պարտադրաբար նախատեսում է հնարավորին չափ երկար ժամանակահատվածի ընդգրկում, ինչին և հետամուտ ենք եղել:

6. «Ազգայնականություն»

Այժմ անդրադառնանք «Մայրենի լեզուն և ազգայնականությունը» ուսումնասիրությանը և այս ատենախոսության հետ նրա իբր առնչություն չունենալուն: Բայց սկզբում կարդանք կարծիքում նշված ևս մի դիտողություն:

Բաժինը գրում է, թե մեր ատենախոսության «117-րդ էջում Գրիգոր Տաթևացին և Ղազար Ջահկեցին դիտվել են հայ ազգայնականության խոչորագույն տեսաբաններ: Նախ՝ ազգայնականությունը տվյալ դեպքում անտեղի է հիշատակվել, որովհետև ազգայնականն իր ազգի շահերը մյուս ազգերի շահերին հակադրողն ու գերադասողն է: Այնինչ վերջիններիս մոտ նման մտայնության նշույլ անգամ չկա»:

Այժմ տեսնենք, թե արդյո՞ք Գրիգոր Տաթևացին և Ղազար Ջահկեցին իսկապես չեն գերադասել հայ ազգը մյուսներին (թեև ազգայնականության մեր սահմանումը տարբեր է):

Արդ, եթե բաժնի աշխատակիցները կարդային մայրենի լեզվին և ազգայնականությանը նվիրված մեր ուսումնասիրությունը, ապա այնտեղ կհանդիրպեին Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» երկասիրությունից կատարված մի մեջբերմանը, որտեղ Տաթևացին, վերաշարադրելով ու մեկնա-

բանելով Եղիշեին, գրել է (նախ կարդանք աշխարհաբար մեր թարգմանությամբ).

«Չույների լեզուն փափուկ է, հռոմեացունը՝ սաստիկ, հոնինը՝ սպառնական, հնդիկինը՝ ճռվռացող, պարսկինը՝ պերճ, իսկ *հայինը համեղ է և [հայը] լիապես կարող է բոլոր լեզուները ճշգրիտ յուրացնել*: [Այստեղից Տաթևացին թողնում է Եղիշեին և անում հետևյալ հայտարարությունը] *Իսկ ուրիշները հայոց լեզուն աղճատված և սխալ են ուսանում, քանի որ մասնավոր է նրանց լեզուն*»:

Նույն հատվածը գրաբար բնագրով հնչում է այսպես՝

«[հայը] *բոլորապես կարող է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: Եւ այլք զհայոյն՝ ծեքական և թիւր ուսանին, զի մասնաւոր է լեզու նոցա*»³:

Կարդանք ևս մի քանի հատված Գրիգոր Տաթևացուց՝

«Նմանատիպ և ազգս հայոց՝ թպէտ մի է, կարէ՛ պատուական գոլ բազմաց...»:

Կամ՝ «Ապա յայտ է, թէ ո՛չ ազգս հայոց եթող և բաժանեցաւ, այլ նոքա (այսինքն՝ մյուսները) թողին զուղիղն և բաժանեցան»:

Նկատի ունենալով հայ ազգը, Տաթևացին գրում է՝ «Եվ լաւ է մի ակն պատուական՝ քան զբազուն քարինս անպիտան»⁴: Չետագայում այս միտքը կրկնում է Ղազար Ջահկեցին:

Այս բոլոր դրվագներում հայ ազգը պարզորեն գերադասված է մյուս ազգերից: Գրիգոր Տաթևացուց և Ղազար Ջահկեցուց կարելի է մեջբերել ոչ միայն բազմաթիվ այլ նմանատիպ մտքեր, այլև նույնիսկ ամբողջական գլուխներ, որոնց մասին ատենախոսության մեջ խոսվում է: Օրինակ՝ Տաթևացին առաջադրում է Աստծու՝ «Չայոց ազգին» պարզևած տաս

³ *Տէն Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը. հայկական և եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական քննություն* (Երևան. Մատենադարան, «Արտագերս» հրատ., 2001), էջ 29-31:

⁴ «Գիրք հարցմանց», էջ 550-551:

«առանձնական բարութիւնները»: Իսկ Ղազարն սրանց թիվը հասցնում է 50-ի, այսպիսով դարձյալ գերադասելով հայերին: Չետևաբար՝ Գրիգոր Տաթևացուն և Ղազար Ջահկեցուն՝ «հայ ազգայնականության խոշոր տեսաբաններ» տված մեր բնութագրումը ճիշտ է:

Ցավոք այսպիսի հարցերը մեր պատմագիտությունը երբեք չի ուսումնասիրել, ավելի շուտ՝ օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարբեր պատճառներով խուսափել կամ պարզապես վախեցել է ուսումնասիրելուց: Իսկ այս հարցերին նվիրված մեր վերոհիշյալ ուսումնասիրությունները *անհրաժեշտ* հիմք են ծառայել մեր ներկա ատենախոսության կարևոր գլուխները գրելու համար: Մաշտոցի անվան Մատենադարանում ուշադիր ընթերցել են և՛ մեր ատենախոսությունը, և՛ մեր հրապարակած ուսումնասիրությունները և նկատել են նրանց միջև կապը: Չետևաբար, Մատենադարանի հասցեին ուղղված դիտողությունը անտեղի է և ավելորդ:

7. «Ղարաբաղի ժողովրդագրություն» և հայոց զորքի թվաքանակը

Այժմ գանք այն պնդմանը, թե Ղարաբաղի ժողովրդագրությանը նվիրված մեր ուսումնասիրությունն այս ատենախոսության հետ որևէ առնչություն չունի:

Բայց չէ՞ որ մենք հետազոտել ենք ոչ թե Ավստրալիայի, այլ Արցախի պատմական ժողովրդագրությունը: Մեր հոդվածի ամբողջական խորագիրն այսպիսին է՝ «Ղարաբաղի ժողովրդագրությունը 1710-1720 թթ.»։ Արդյո՞ք այս վերնագիրն ինքնին բավարար չէ, որպեսզի հաստատվի մեր ատենախոսության հետ նրա ամենասերտ առնչությունը: Չէ՞ որ ամբողջ XVIII դարում Արցախն է եղել ազատագրական շարժումների կենտրոնը, Գանձասարն էլ՝ Արցախի հոգևոր կենտրոնը: Ժողովրդագրական տեղեկությունների վերհանումն անհրաժեշտ է եկեղեցու և ազատագրական շարժման բազմաթիվ կարևոր հարցերին ճիշտ պատասխան տալու համար: Օրինակ, եթե Միջին դարերի բաժնում կարդային այդ հոդվածը, հնարավոր է չպնդեին, որ 1720-ական թթ. հայերը 50-60 հազարանոց զորք չունեին, որովհետև այդ հարցն այնտեղ արժարժված է, իսկ ժողովրդագրական տվյալներն ապացուցում են այդ թվի արժանահավատությունը:

«àðì ýíñéíãî àîéñèà íúíà â ãîðà èì ýíóàì íé Ñîáí àòà (այսինքն՝ Սղնախում), à èì ýííí êíííéօսն áéèñéì 30.000, ãì íàðíօսն áéèñéì 20.000, èìօìðíà àíéñéì ðàçոօի ýíèàì íօ ãì ðíàà Æáíæè íäèì ááíü»:

Արցախի և Սյունիքի հայ զինվորության ընդհանուր թվի վերաբերյալ տվյալները տատանվում են՝ 30.000-ից 60.000-ի սահմաններում, արտացոլելով տվյալ պատմական պահի ոգևորությունից, հաղթանակներից, պահանջից՝ ավելացող, ինչպես և՛ հիասթափություններից ու անհաջողություններից պակասող ռազմիկների քանակության իրական փոփոխությունները: Այսպես, 1730-ի մարտի 4-ի իր զեկույցում Իվան-Կարապետը, հայտնելով, որ 1720-ականների վերջին տարիներին Սղնախներում կենտրոնացած հայկական զինուժը 30.000-ի չէր հասնում, ընդգծում էր, որ զորքի քանակը զգալի անկում էր ապրել, քանի որ, չստանալով խոստացված ռուսական օգնությունը, շատ զինվորներ ցրվել և թաքնվել են սարերում ու անտառներում: Իսկ Թարխանյուզբաշին, 1729-ի հոկտեմբերին, հավաստիացնում էր ռուսներին, որ օգնություն ստանալու դեպքում հայերի բանակը միանգամից կհամալրվի 20 հազար մարտիկներով և նորից կհասնի 50.000-ի⁹:

Հետաքրքիր է, որ թուրքերն իրենք 1723 թվականին հայոց զորքի թիվը համարել են 60.000: 1723 թ. ապրիլի 2-ին էջմիածին այցելած թուրք դեսպանը, Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսին մեղադրում էր թե՛ «դու էլ մեծ սուլչի (=հանցանքի) տէր աս, որ Ըռուստին խետ մին աս դառցել, էսչանք խայ աս կանգընացուցել, որ ասում ան, թէ ԿՌ (60 000) խայ եարաղով հազիր ան (=զինված պատրաստ են [կռվելու])»¹⁰: Մի ուրիշ տեղ Գիլանենցը նշում է. «... և մեր հայոց ասկարն որ բոլորվել ան՝ ասում ան՝ թէ ԿՌ /60.000/ մարդ այ, Գ բօլկ /գունդ-Ա.Ա./ ան, որ Գ տեղ նստած ան...»¹¹:

Այսպիսով՝ մեր նշած 50-60 հազարանոց հայկական զինուժը իրական թիվ է, այլ ոչ մեր երևակայության արգասիք (ի դեպ՝ այս հարցը լուսաբանել ենք դեռևս 1990 թ. «Պատմա-բանասիրական հանդես»-ի հմր. 4-ում, էջ 69-70):

⁹ *Àðì ýíí-ðօննèà íօííօáíè ý á 1-íé օðàօè XVIII ááèà, օ. II, ֆնօս II, äí è. 375.*
¹⁰ «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի». - *Կռունկ Հայոց աշխարհին*, 1863, No. Գ, էջ 196:
¹¹ Նույն տեղում:

- Այժմ համառոտաբար Սյունիքում կենտրոնացած հայկական զինուժի ընդհանուր թվի մասին: Բաժինը գրում է, որ մենք Դավիթ-բեկի ուժերը հաշվում ենք 20.000, «այնինչ դրանք 7 հազարից չեն անցել»:

Այս 7 հազար թիվը հավաստի համարելու ո՛չ սկզբնաղբյուրն է նշված, ո՛չ էլ համապատասխան ուսումնասիրությունը:

Դահլիճից ՀՀ ԳԱԱ ինստիտուտի «Միջին դարերի բաժնի» աշխատակից Վրեժ Վարդանյանն ընդհատում է «Ղուկաս Սեբաստացի՛ն է»:

Ա. Այվազյանը խնդրում է չընդհատել և շարունակում է:

Հնարավոր է, որ մեր ընդդիմախոսներն օգտվել են Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ»-ից (հտ. Բ, էջ 382), որտեղ նշվում է 6-7 հազար թիվը: Սովորաբար՝ Դավիթ-բեկի զորքի թիվը հաշվում են 6628 մարտիկ, հենվելով մի հայտնի վավերագրի տվյալների վրա: Սրանք, սակայն, հնացած ու մեծապես սխալ հաշվարկներ են: Ասենք՝ թե ինչու՛:

Դեռևս 1990 թ. «Պատմա-բանասիրական հանդես»-ում (հմր. 4), ապացուցել էինք, որ 6628 զինվորի թիվն արտացոլում է 1722 թ. աշնան դրությունը, երբ Դավիթ-բեկը դեռ նոր էր ժամանել Սյունիք ու տեղի հայ ազգաբնակչությանն ընդհանուր զորահավաքի դեռևս չէր ենթարկել: Ընդ որում՝ 6628 թվի մեջ ներառված չէ Սիսիանի հայկական զինուժը, որը կազմում էր առնվազն 4.000 մարտիկ: Ահա այս ելակետից պետք է կատարել Դավիթ-բեկի ուժերի հաշվարկը:

Դավիթ-բեկն իր իշխանությունը Սյունիքում ամրապնդեց 1723 և հաջորդ թվականներին՝ անցկացնելով այնտեղ մի շարք մեծ՝ որոշ գավառներում երբեմն կրկնված զորահավաքներ: Օրինակ՝ Չավնդուրում անցկացված զորահավաքը ժողովում է 6.000 զինվոր, ավելի վաղ Սիսիանում անցկացված զորահավաքը՝ 4.000 զինվոր, և այլն: Այդ զորահավաքների ընդհանուր հաշվարկը, լրացուցիչ փաստերի հետ միասին ցույց են տալիս 1720-ական թթ. Սյունիքում 20.000 հայ զինվորականության մոտավոր առավելագույն թիվը:

Միջին դարերի բաժինը, մինչև իր այս մի դիտողությունը թղթին հանձնելը, կարող էր նախապես հարցնել մեզ ատենախոսության մեջ այդ թվի հայտնվելու պատճառների մասին, նկատի ունենալով, որ 1720-ական թթ. Սյունյաց ռազմաքաղաքական պատմությանը նվիրված վերջին թեկնածուական ատենախոսությունը, եթե չեն սխալվում, ես եմ պաշտպանել 1992 թ., հետագայում շարունակել ենք նույն ուղղությամբ աշխատել ու հրապարակվել, հետևաբար, հիմնավոր հիմքեր կարող էինք ունենալ Սյունիքում 20000-հազարանոց զինուժի մասին խոսելիս:

Դեռևս 13 տարի առաջ հայտնաբերելով ու գրավոր մատնանշելով այս հարցը ճիշտ լուծելու բանալին, այսինքն՝ այն, որ Սյունիքի զինուժի թիվը պետք է հաշվել գումարելով 1722 թ. աշնան դրությամբ արդեն եղած այդ 6628 զինվորներին [ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ գումարած Սիսիանում եղած ևս 4000 զորքը, այսինքն այդ պահի դրությամբ արդեն մոտ 10 հազարին)՝ հետագա տարիներին (1722-ից մինչև 1729 թ.) մի շարք ընդհանուր մոբիլիզացիաներից հավաքված նորակոչիկներին, ինչպես նաև հանելով այդ ստացված թվից զոհվածներին, ...

Դահլիճից 33 ԳԱԱ ինստիտուտի «Միջին դարերի բաժնի» աշխատակից Վրեժ Վարդանյանը նորից ընդհատում է՝ «Կոնկրետ աղբյուրները նշեք»:

Ա. Այվազյանը պատասխանում է՝ «Յե՛նց նույն «Պատմութիւն Ղափանցվոց»-ը՝ «Դաւիթ Բեկը»-ը», ա՛յ, հե՛նց այդ նույն կոնկրետ աղբյուրը»:
Շարունակում է ընթերցել:

...այդուհանդերձ մինչև այսօր ամբողջությամբ չենք հրապարակել այդ հարցին նվիրված մեր պատրաստի ուսումնասիրությունը, որոշ հատվածներ միայն հրապարակելով անգլերեն մենագրության մեջ: Սակայն առաջիկայում այն նույնպես կհրատարակվի:

- Բաժինը պնդում է, թե 1720-ական թթ. «ռուս-թուրքական պատերազմ չէր հասունանում»:

1722-1724 թթ. այդպիսի պատերազմը մեծ հավանականություն ուներ, այդ հավանականությունը հաշվի էին առել հայ, ու նաև վրաց իշխող շրջանակները և հանուն ազատության վստահորեն զենք բարձրացրել: Այդ պատերազմը, սակայն, կանխվեց 1724 թ. Կ. Պոլսում ստորագրված պայմանագրով: Բայց նույնիսկ այդ պայմանագրի կնքումից հետո մերթ ընդ մերթ միջազգային իրադրությունը լարվում էր և պատերազմի վերսկսումը հավանական էին համարում երկու կողմերն էլ: Բերենք համապատասխան մեջբերումներ երկու կողմերից:

1725 թ. մարտին Վարանդայում ոչնչացված թուրքական կորպուսի հրամանատարներից մեկը՝ գերի ընկնելով, հարցաքննության ժամանակ հայտարարել էր, որ հայկական զինուժը ոչնչացնելուց հետո՝ հարձակվելու են մերձկասսայան տարածքներում կենտրոնացած ռուսական զորքերի վրա¹², **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՏՆՈՒՄ Է՝** «և ասել էր, ես այստեղ չեմ գրել, որ «հայկական զորքն է փակում մեր ճանապարհը. անմիջապես այն բանից հետո, երբ մենք ոչնչացնենք հայկական զորքը՝ հարձակվելու ենք ռուսների վրա», որոնք մերձկասսայան տարածքներն էին գրավել]:

1736 թ. մարտին Մինաս Տիգրանյանի մի զեկուցագրում որպես հայտնի փաստ է նշված հայոց զինուժի դերը՝ թուրքական զորքի ապահովելը դեպի Կասպից ծով խոչընդոտելու գործում (ռուսերեն կարդամ)՝ «Ñããî àõèèà àðì ýî ñèèà ñòàðøéíù ñ âîéñèè èçáãñîî ì îîãèà ãîãù îð àáèèèèð íáíðèýðàèèè ñàî è çàùèùàèè è îðîîð àáááèèè, è îî÷òè àæááíááíîé ñ èðîîîîðîèèèèèè àîé îðîîîîèèèè è òððàøéîîó âîéñèè è Èãñîèéñèîîó ì îðð îóðü âîñîðàùàèè **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՏՆՈՒՄ Է՝** «իսկ ի՞նչ է դա նշանակում՝ մերձկասսայան ամբողջ շրջանում ռուսական զորքերն էին», ýèî ó òððéîâ ææááíèà áùèî è Èãñîèéñèîîó ì îðð àèáááíèà ñâîá ðàñî ðîððáí èòü»¹³:

[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՏՆՈՒՄ Է՝ «Փաստաթղթեր շատ կան, ես այստեղ մեկն էլ բանավոր ասեմ. գեներալ Դոլգորուկին նույնպես մի փաստաթղթի մեջ հորդորում էր իր կենտրոնական իշխանություններին, որ այդ պահին, երբ հայերը հերթական ճակատամարտից հետո ջախջախել են օսմանյան

¹² *Àðì ýîî -ðõññèèà îðîîðáíèý á 1-î é òððàøè XVIII ááèà, օ. II, ÷-ãñòü II, ñòð. 249:*
¹³ *Àðì ýîî -ðõññèèà îðîîðáíèý á 1-î é òððàøè XVIII ááèà, օ. II, ÷-ãñòü II, ñòð. 326:*

գորքերին, նպատակահարմար կլինի միացնել հայկական և ռուսական գորքերը և թուրքերին այդպիսով շատ ծանր դրության մեջ դնել»¹⁴]:

Ուրեմն՝ 1720-ական թթ. ռուս-թուրքական պատերազմը միշտ էլ հավանականություն էր և դրա հետ անընդհատ հաշվի էին նստում տարածաշրջանում եղած բոլոր ռազմական ուժերը:

Խոսենք նաև որոշ մանր խնդիրների մասին, որոնք նշված են այս կարծիքում, բայց որոնք, սակայն, մի ընդհանուր ծանր տպավորություն են ստեղծում մեր ատենախոսության իբր շատ տխուր վիճակի մասին:

ա) Կարծիքում «իբր» բառով է ուղեկցվում բաժնի անհամաձայնությունը մեր արտահայտած հետևյալ մտքին (մեջբերում ենք նախ մեր նախադասությունը). «1375 թ. Կիլիկյան Հայաստանի կործանմամբ՝ հիմնովին ոչնչացվեց հայկական պետության այդ պահին արդեն շուրջ երեքհազարամյա շարունակական ավանդույթներ ունեցող ճյուղավորված համակարգը՝ ներառյալ թագավորական հաստատությունը և հայկական բանակը»:

Մեզ անհասկանալի է, թե այս նախադասության հատկապես ո՞ր կետն է բաժնի աշխատակիցների մոտ վրդովմունքի տեղիք տվել. արդյո՞ք այն, որ 1375 թ. Կիլիկյան Հայաստանը կործանվեց ու հայկական թագավորությունը և բանակը ոչնչացվեցին: Բայց սրանք հանրածանոթ և անժխտելի փաստեր են: Այդ դեպքում վրդովմունքի աղբյուրը գուցե՞ այն հայտարարությունն է, որ հայկական պետությունն այդ պահին ուներ շուրջ երեքհազարամյա ավանդույթներ: Բայց եթե այդպես է, ուրեմն Միջին դարերի պատմության բաժինը մերժում է «Հայ ժողովրդի պատմության» իր իսկ ինստիտուտի հրատարակած ակադեմիական հատորը, որտեղ հայկական պետականության ակունքները հասցվում են մինչև մ.թ.ա. 2-րդ հազարամյակ: Այնուհետև բաժինը գրում է, թե «ատենախոսի գիտական հետաքրքրություններին չեն առնչվում Հայ ժողովրդի չորսհազարամյա պատմության մասին դատողությունները»: Իմ գիտական հետաքրքրությունների շրջանակը սահմանափակելու այս

¹⁴ Ռ. Ի . Նիերաուա, *Էնոի ծեյ Ծիննեè ñ äðááí èð áðáí áí*. Էիեäà X, Օիì 19-20 (Ì ìñèäà: Էçä. Նիöèäëüí ì-ýêíííì . Էèðáðäóóðù, 1963), ñöð. 15.

արտառոց փորձում, բաժինը, կներե՛ք, ակնհայտորեն գերազանցել է իր իրավասությունները:

ք) Երկրորդ դիտողության մասին: Բաժնի կարծիքում գրված է, թե Պ. Հարությունյանի և Յ. Խաչատրյանի ուսումնասիրություններն անտեսել ենք մեր աշխատանքում:

Պ. Հարությունյանի և Յ. Խաչատրյանի ուսումնասիրությունները չեն անտեսվել, դրանք լայնորեն օգտագործվել են 1997 թ. անգլերենով մեր հրապարակած մենագրության մեջ, մենագրություն, որը բազմիցս հղված է ատենախոսության մեջ և որի արդյունքներին հենվելով մենք անցել ենք դեպի նոր խնդիրների լուծում: **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Էլ ի՞նչ իմաստ ուներ դրանք նորից նշել»]:**

զ) Ինչու՞ ենք Արիստակես Լաստիվերցու քննական բնագրի փոխարեն օգտագործել աշխարհաբար թարգմանությունը: Սկզբում պարզաբանեմ, որ Լաստիվերցու երկն ատենախոսության մեջ օգտագործվել է ընդամենը մեկ անգամ՝ մեկ մեջբերման մեջ (էջ 132): Սակայն աշխարհաբար հրատարակությունը նախընտրել ենք միանգամայն մտածված, ունենալով երկու պատճառ. Առաջին. ի տարբերություն XVII-XVIII դարերի հայկական բնագրերի, Լաստիվերցուց մեր քաղած հատվածը գրաբար բնագրում բավական խրթին է և բարդ նույնիսկ մասնագետ ընթերցողի համար, իսկ մեր նպատակներից մեկը մատչելիության առավելագույնս հնարավոր ապահովումն է եղել: Բայց երկրորդ պատճառն ավելի հիմնավոր է: Բանն այն է, որ 1963 թ. Կարեն Յուզբաշյանի հրատարակած Լաստիվերցու քննական բնագիրը ունի չափազանց մեծ թերություններ, որոնք մանրամասնորեն քննադատելուց հետո Լաստիվերցու կենսագործունեությունն առանձին մենագրությամբ ուսումնասիրած Գուրգեն Մանուկյանը եկել է հետևյալ եզրատանգման (մեջբերում են). «Այսպիսով, գիտական հրատարակության տարընթերցվածքները, քանի որ ունեն վերը նշված թերությունները **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Այդ թերությունները նշված են աղյուսակի մեջ՝ մի քանի էջի վրա»:]**, հիմնականում դառնում են կասկածելի և ոչ օգտագործելի: Պետք է

ավելացնել նաև, - գրում է Մանուկյանը, - որ... առաջաբանում, բնագրում, անվանացանկերում և բովանդակությունը ներկայացնող ցանկում կան բազմաթիվ չնկատված վրիպակներ»¹⁵:

Ահա այս պատճառներով էլ նախընտրել ենք այդ միակ մեջբերումը Լաստիվերցուց կատարել աշխարհաբար հրատարակությունից, որը մեր նպատակների համար առավել նպատակահարմար էր ու վստահելի:

[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Երկու այլ դիտողության մասին ասեն պարզապես բանավոր: Կարծիքում նշված է, որ մենք խոսել ենք այն մասին, որ 1723-1724 թթ. չհաջողվեց միավորել Արևելյան Հայաստանում հայկական զինվորության չորս հատվածները, որոնք կային Արցախում, Սյունիքում, Երևանում և Նախիջևանում: Բաժնի կարծիքն անհամաձայնություն է հայտնել, ասելով, թե Նախիջևանում և Երևանում հայկական զինվորականություն չկար: Կներեք, դա այդպես չէ: Եկեք հիշենք 1724 թ. Երևանի երեքամսյա պաշտպանությունը, որին մասնակցում էր 10 հազարից ավելի հայ ռազմիկ»¹⁶: Այդ ռազմիկների մի մասը, ճիշտ է, ներկայացնում էր աշխարհագոր, մյուս մասը՝ պրոֆեսիոնալ զինվորականներ էին, բայց ամենակարևորն այն է, որ այդ պոտենցիալ հայկական ուժն այնտեղ առկա էր: Եվ փաստաթղթերի մեջ նույնպես նշվում է, որ Արցախի հայոց ղեկավարությունը նպատակ էր ունեցել շարժվելու դեպի Երևան: Ինչպես մի փաստաթղթում ասված է, թե «պետք է քրդին վերացնենք («քուրդն» այս դեպքում օգտագործված է «մահմեդական» իմաստով), որպեսզի միավորվենք Երևանի հետ, որպեսզի բոլոր հայերը մեկ դառնան»¹⁷: Այդպես է ասված փաստաթղթի մեջ:

Փաստաթղթերում ունենք տեղեկություններ, որ Նախիջևանի տարբեր բնակավայրերում կենտրոնացած են եղել հայ զինվորականության խոշոր

¹⁵ Գ. Մ. Մանուկյան, *Արիստակես Լաստիվերցի* (Ե., 1977), էջ 139-140:

¹⁶ Տե՛ս այս մասին ամենավերջին գիտական հրապարակումը՝ Ա. Մ. Այվազյան, «Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին».- *Պատմա-բանասիրական հանդես*, 1991, No. 1 (132):

¹⁷ 1724 թ. ապրիլին գրված այդ փաստաթղթում բառացիորեն ասված է հետևյալը. «Եւ իսայերին մէջտեղն Քուրդ [=մահմեդական ուժեր] կայ: Ես իսայերն ասում ան, թէ... «կուզանք Քուրտին վերէն, քուրտն փչացնենք, որ տեղէս (իմա՝ Արցախից, Ա.Ա.) մինչի Երևան ողջ իսայեր ան՝ Ա [1] կուտանան» ((մեջբերված է ատենախոսության էջ 34-ում հետևյալ գրքից՝ *Āđī yī ī-đōññēēā īđī īōāīēy ā 1-ī ē đđāđē XVIII āāēā*, ծ. II, ÷āññü II, ñđđ. 99):

բեկորներ: Օրինակ, 1723 թ. Հին Ջուղայից, սա շատ հետաքրքիր փաստ է, 400 զինված հեծյալներ գալիս միանում են Դավիթ-բեկին: Հին Ջուղան, ինչպես գիտենք, գտնվում է Նախիջևանի տարածքում: Ազուլիսը, Շահապոնքը և այլ բնակավայրերը նույնպես ունեին հայկական զինվորականություն: Խնդիրն այդ զինվորականության միավորումն է եղել¹⁸:

Ես ավարտում եմ, մեկ-երկու պարբերություն է մնացել:

Վ. Բարխուդարյանը շտապեցնում է. «Այո՛, այո՛, երկարեց»:

Ա. Այվազյանը պատասխանում է. «Բայց, կներե՞ք, դիտողությունները նույնպես շատ էին»: Շարունակում է ընթերցել:

Կարծիքում հանդիպել ենք ընդամենը երկու օգտակար և տեղին դիտարկումների...

Վ. Բարխուդարյանը հետաքրքրված հարցնում է. «Եվ որո՞նք են»:

...որոնք շնորհակալությամբ ընդունում ենք: Առաջինն այն է, որ մենք ցավոք չենք նկատել ու չենք օգտագործել մեր ուսումնասիրության թեմայով 1977 թ. «Լրաբեր հասարակական գիտությունների»-ում (հմր. 4) Ֆրունզե Պողոսյանի տպագրած մի հոդվածը: Երկրորդն այն է՝ որ մյուռոնի բաշխումը կարգավորել է տակավին Պարտավի 768 թ. ժողովի կանոնախումբը: Այս վրիպումները, սակայն, ատենախոսության արդյունքների վրա որևէ կերպ չեն անդրադարձել:

Բաժնի կարծիքում արծարծված մեկ-երկու այլ հարցերի (մասնավորապես Ղազար Ջահկեցու) մասին՝ ես այսօր դեռ առիթ կունենամ անդրադառնալ, իսկ հիմա անփոփեն:

Ցավում եմ, որ Միջին դարերի բաժնի կարծիքում ատենախոսության գեթ մեկ գլուխ կամ մեկ հատիկ նոր բացահայտում դրական գնահատանքի չի արժանացել: Կարծիքում արված դիտողությունների բացարձակ

¹⁸ Այս հարցերը քննված են մեր հետևյալ հոդվածում՝ **Այվազյան, Ա. Մ.**, «Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1991, No. 2 (Չ. 133), էջ 109-111:

մեծամասնությունը սխալներ են, թյուրըմբռնումներ և թյուրիմացություններ, որոնք թողնում են որոշակի միտումնավորության տպավորություն:

Շնորհակալություն ուշադրության համար:

(Դահլիճը ծափահարում է):

Վ. Բարխուդարյանը հարցնում է. «Պարոն Այվազյան, բաժնի կարծիքում ես լսեցի նաև ասված է, որ հայոց կաթողիկոսներին անվանապես չի կարելի դիմել: Ինչու՞ չեք ասում այդ մասին»:

Ա. Այվազյան. «Հիմա պատասխանեմ: Այդ հարցը հանդիպում է նաև ատենախոսներից մեկի կարծիքում: Երբ ամեն պահի խոսում ես այդ կաթողիկոսների մասին, երբեմն նույն էջի մեջ գրում ես, ասենք, Աստվածատուր Չամադանցի կամ Աբրահամ Մշեցի, և նրանց անուններն անընդհատ կրկնվում են և կարծես թե կրկնողությունը զուտ ոճական տեսակետից արդեն անհարիր, անհարթ է դառնում»:

Վ. Բարխուդարյան. «Փոխարենը՝ ասեք «կաթողիկոսներ»»:

Ա. Այվազյան. «Շարունակեմ: Եկեք բացենք Օրմանյանի «Ազգապատումը»: Ամեն վայրկյան նա խոսում է այդ կաթողիկոսների և այլ եկեղեցական գործիչների մասին, ամեն վայրկյան: Եվ նույնպես՝ անընդհատ անունով, առաջին դեմքով այդպես է դիմում նրանց: Կարող եք ասել, թե Օրմանյանն ինքը արքեպիսկոպոս էր, ուրեմն իրավունք ուներ այդպես դիմելու, բայց հեղինակը՝ հեղինակ է: Ինձ թվում է, սա ոճի հարց է»:

Մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ Բ. Հարությունյանը ձայն է խնդրում և դահլիճից հարցնում. «Պարոն Այվազյան, ես կուզենայի իմանալ, թե ռուսական գործերը ե՞րբ հանվեցին կասպիական շրջանից»:

Ա. Այվազյան. «1735 թվականին»:

Բ. Հարությունյան. «Ուրեմն 1736 թ. ռուսական գործերի վրա հարձակվելու կարիք չկար»:

Ա. Այվազյան. «1736 թ. մասին չէ խոսքը: Դիտողությունը արված է 1720-ականների մասին: Ուզու՞մ եք, բացենք կարծիքը և կարդանք»:

Բ. Հարությունյան. «Դուք 1736 թիվ ասացիք»:

Ա. Այվազյան. «Այդ ես չեմ ասել, դիտողության մեջ գրված է, որ «1720-ական թթ. ռուս-թուրքական պատերազմ չէր հասունանում»: Ի՞նչ կապ ունի 1736 թ.»:

Վ. Բարխուդարյանը դիմում է Ա. Այվազյանին. «Եղավ, նստեք»: